ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԾՔ-ԲՄԱՇՁԲ-19/1»

ք. Ծաղկաձոր «07» հոկտեմբեր 2019թ.

«Ծաղկաձորի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Ա.Հարությունյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Հ.Մնացականյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **<<Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ի բակային տարածքի վերանորոգման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 70 օրացուցային օրը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 *Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին*, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 81 900 000 (ութսունմեկ միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 13 650 000 (տասներեք միլիոն վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[42] .

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ -ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[43] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ

---

[42] Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:

[43] Եթե պայմանագիրը կնքվել է ,Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ծաղկաձորի համայնքապետարան	**<<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ**
Հասցե՝ ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9	**Հասցե՝ ք. Գավառ Անդրանիկի 5**
ՀՀ ՖՆ ԳՎ	**«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ**
ՀՎՀՀ 03001885	**ՀՎՀՀ 08404037**
հհ 900122002224	**հհ 1150014871111107**
հհ 900122000392	
Համայնքի ղեկավար Ա.Հարությունյան	**Տնօրեն Հ.Մնացականյան**
_____	_____
(ստորագրություն)	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
«07» հոկտեմբեր 2019թ. կնքված
<<ԾՔ-ԲՄԱՇՁԲ-19/1>> ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

«ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ»-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ «ԾՆՈՒՀ ՀՈԱԿ-Ի ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ» ԿԱՏԱՐՄԱՆ

<<Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ի բակային տարածքի վերանորոգման աշխատանքների

ՀՀ հազար դրամ

հ/հ	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափի միավոր	Քանակը	Միավորի գինը	Ընդամենը
1	3	4	5	6	7
1	Ցինկապատ պրոֆիլավոր թիթեղից տանիքաձածկի քանդում	100մ	4.5	17.773	79.977
2	Ծպեղերի քայքայված հատվածների փոխում (չորսուներից)	մ	24	4.863	116.700
3	Գերաններից կանգնակների փոխում, թեքանների փոխում	մ	12	8.683	104.197
4	Կավարամածի փոխում 50x50մմ չորսուներից	մ	389.1	1.948	758.121
5	Ցինկապատ թիթեղից ջրհոս ճոռի և ցվիքի պատրաստում d=0,5 մմ՝ ցինկապատ թիթեղից տախտակամածի հետ միասին	100մ	0.863	1623.353	1400.953
6	Ցինկապատ թիթեղից ջրատարների տեղադրում h=6մ, Ø100 խողովակներից	կ-տ	8	25.109	200.871
7	Պրոֆիլավոր ցինկապատ թիթեղով տանիքի պատրաստում КП-21-0,5մմ ցինկապատ թիթեղից պիպերի (коньек) հետ միասին՝ 0,5մմ ցինկապատ թիթեղից	100մ	4.2	450.783	1893.287
8	Քիվերի/բոլոր մասնաշենքերի/ երեսապատում տախտակով	մ	80	3.397	271.759
9	Ուղղաձիգ լաստակներ, տանիքի քիվի երեսպատման համար	100մ	10.46	72.150	754.689
10	Քիվի երեսապատում ցինկապատ թիթեղով (ՊՎՔ նյութերից երեսպատվածքի փոխարեն)	100մ	0.8	322.587	258.069
11	Տանիքին ձյան հոսքի արգելաճաղերի տեղադրում	տ	0.15	61.171	9.176
12	Ցինկապատ ձնպաշտպան L -1,5մ	հատ	40	5.244	209.749
	II.Հակահրդեհային ելքերի մետաղական աստիճան՝ 2 հատ				

13	Հիմնական պատի քանդում (երկհարկանի մասնաշենքի 2-րդ հարկի հակահրդեհային ելքեր,)	մ	0.8	10.953	8.763
14	Մետաղական աստիճանի կառուցում առանց նյութի արժեքի	տ	2.8	113.117	316.728
15	Պողպատյա ուղղանկյուն կտրվածքի խողովակ100x100x3մմ	գծ-մ	19	4.354	82.731
16	Տաշտաձև հեծան N16	գծ-մ	35	7.887	276.037
17	Պողպատյա ուղղանկյուն կտրվածքի խողովակ50x50x2մմ	գծ-մ	153	1.381	211.265
18	Ծալքավոր պողպատե թիթեղ 700x300x3մմ	մ	10	10.132	101.317
19	Անկյունակ 40x40x4	գծ-մ	9	1.322	11.894
20	Ներդիր դետալներ	կգ	50	0.474	23.720
21	Էլեկտրոդ	կգ	60	0.889	53.369
22	IV-րդ կարգի գրունտի մշակում ձեռքով	100մ	0.015	327.568	4.914
23	Բետոնե հիմքի կառուցում B-15	մ	1.6	38.197	61.115
24	Մետաղական մակերևույթների ներկում հակակոռոզիոն ներկով	100մ	0.5	23.914	11.957
25	Շին. աղբի դուրս բերում, բարձում և տեղափոխում 7 կմ	տ	16	2.694	43.102
	Բարեկարգման աշխատանքներ			0.000	0.000
1	Մետաղական ցանկապատի ապամոնտաժում/1,8տն/	մ	150	2.211	331.651
2	Խամքարաբետոնե հենապատերի քանդում՝ հիմքերի հետ միասին	մ	340	10.445	3551.333
3	Գլխավոր մուտքի և մասնաշենքերի չօգտագործվող բետոնյա աստիճանների քանդում	մ	12	10.445	125.341
4	IV կարգի գրունտի մշակումը մեխանիզմով՝ բարձելով ինքնաթափ մեքենաների վրա	1000մ	0.8	817.716	654.173
5	III կարգի գրունտի մշակումը ձեռքով՝ կողլիցք	100մ	0.8	185.919	148.735
6	Բազալտե եզրաքարերի քանդում	գ.մ	154	0.745	114.803
7	Ծառերի արմատահանում	հատ	35	0.322	11.267
8	Խաղահրապարակների մասում, սալիկապատվող տարածքում և շքամուտքի հարթակի ա/բ -4ёÙ շերտերի քանդում	մ	755	0.051	38.375
9	Շին աղբի հավաքում, բարձում և տեղափոխում 13կմ	տ	1300	3.693	4801.526
	2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ				
10	Բազալտե եզրաքարի տեղադրում 150x300x500մմ	գծ-մ	106.5	9.581	1020.379
11	Բետոնե մայթեզր տեղադրում 500x280x150	գծ-մ	58	6.997	405.842
12	Բետոնե մայթեզր տեղադրում 500x200x80մմ	գծ-մ	130	4.430	575.963
13	Ա/բ շերտի փոսային նորոգում մինչև 5քմ մեկ տեղում	մ	500	5.422	2711.000
14	Խճի նախ.շերտի կառուցում ա/բ շերտի տակ 150մմ հաստ.	100մ	15	136.379	2045.689
15	Խոշորհատիկ ա/բ շերտ 40մմ	100մ	15	281.272	4219.082
16	Մանրահատիկ ա/բ շերտ 40մմ	100մ	15	395.745	5936.170

17	Գրունտի տոփանում խճով	մ	255	0.280	71.286
18	Խճի նախապատրաստական շերտ h=200մմ	մ	51	7.006	357.293
19	Ավազի շերտի կառուցում 10% ցեմենտի խառնուրդով 100մմ	մ	25.5	7.878	200.897
20	Սալիկապատում բետոնե գունավոր սալիկներով 60մմ	մ	255	5.261	1341.471
21	Գրունտի տոփանում խճով	մ	170	0.280	47.524
22	Խճի նախապատրաստական շերտ h=150մմ	մ	170	1.364	231.859
23	Մանկապարտեզի շենքի կցամայթերի սալիկապատում անկանոն ձևի 30մմ հաստ. բազալտե սալիկներով (բրեկչա)	մ	170	9.073	1542.367
24	Խճի նախապատրաստական շերտ h=150մմ	մ	24	1.364	32.733
25	Խամքարաբետոնից աստիճանի կողային պատերի հիմքերի կառուցում B-12,5 դասի բետոնով	մ	7.8	34.724	270.846
26	Աստիճանի խամքարաբետոնից կողապատերի պատրաստում B12,5 դասի բետոնով	մ	6.7	35.283	236.396
27	Արտաքին բազալտե աստիճանների տակ ե/բ սալի պատրաստում B-12,5 դասի բետոնով	մ	3.8	64.111	243.621
28	Ամրան A500C Ø10	տ	0.42	420.438	176.584
29	Բազալտից 150x300x(800-1300)մմ աստիճանների տեղադրում	100 գծ-մ	0.51	828.145	422.354
30	Բազալտե սալիկներով գլխավոր մուտքի աստիճանահարթակի երեսպատում 30x300մմ, (չհղկված)	մ	7.8	13.156	102.616
31	Պատի գլխադիր բազալտե սալի տեղադրում 30x300մմ, (չհղկված)	մ	6.8	21.263	144.588
32	Մուտքի աստիճանի պատերի երեսպատում բազալտե սալերով 30x300մմ, (չհղկված)	մ	18	16.841	303.137
33	Հենապատերի երկշերտ ջրամեկուսիչ շերտի իրականացում բիտումով	100 մ	0.4	73.260	29.304
34	Վթարային ելքերի աստիճանների երեսպատում բազալտե 30մմ հատ. սալերով (թվով 5 հատ)	մ	22.5	15.723	353.761
	3. ՇՔԱՄՈՒՏՔԻ ՀԱՐԹԱԿ				
24	Խճի նախապատրաստական շերտի իրականացում /շքամուտքի հարթակ/ 150մմ 30,5*0,15	մ	4.58	7.226	33.095
25	Շքամուտքի բազալտե աստիճանների բետոնե հիմքի կառուցում B12.5 դասի բետոնով	մ	1.5	42.424	63.636
26	150x300մմ չափերի բազալտե աստիճանների տեղադրում /շքամուտքի հարթակի աստիճաններ/	գծ-մ	25.5	8.285	211.265
26	Բետոնից նախապատրաստական շերտի կառուցում B7,5 դասի բետոնով h=100մմ	մ	3	32.242	96.725
27	30մմ հաստ. բազալտե սալերով հարթակի երեսպատում	մ	30	13.156	394.677
28	Շքամուտքի հատվածում պատերի երեսպատում 30մմ հաստ. բազալտե սալերով h=600մմ	մ	16.8	16.841	282.927

29	Պատերի երեսպատվածքի գլխադիրների տեղադրում 30մմ հաստ. բազալտե սալերով 60մմ լայնքով	մ	1.8	21.263	38.273
	5. ՀԵՆԱՊԱՏԵՐ				
30	40-70մմ բազալտե խճից նախապատրաստական շերտ h=15սմ/հենապատերի հիմքերի տակ/	մ	22	7.226	158.972
31	Խամքարաբետոնից աստիճանի կողային պատերի հիմքերի կառուցում B-12,5 դասի բետոնով	մ	92.5	34.724	3211.952
32	Աստիճանի խամքարաբետոնից կողապատերի պատրաստում B12,5 դասի բետոնով	մ	151	38.256	5776.706
33	Հենապատերի արտաքին մակերևույթի սվաղում ց/ավ. շաղախով՝մետաղալարե ցանցի վրա	մ	395	2.770	1094.194
34	Արտաքին պատերի գունավոր ցայտաներկում ճակատային ներկով Ù³ÍÏ³å³ïáõÙáí	100մ	3.95	83.171	328.526
35	Հենապատերի երկշերտ ջրամեկուսիչ շերտի իրականացում բիտումով	100 մ	2.89	73.251	211.696
	6. ՑԱՆԿԱՊԱՏՈՒՄ				
36	Մետաղական ցանկապատի տարերրերի պատրաստում և տեղադրում (առանց նյութի արժեքի)	տ	2.962	50.514	149.623
37	Պողպատյա ուղղանկյուն կտրվածի խողովակ 80x80x2.5մմ	գծ-մ	63	2.796	176.118
38	Անկյունակ 40x40x2.5	գծ-մ	268.8	0.898	241.371
39	d=3 մմ 30x30 բջիջով մետաղական ցանց	մ	103.74	1.042	108.094
40	Էլեկտրոդ	կգ	105	0.906	95.175
41	Ներդիր էլեմենտների տեղադրում	կգ	121.5	0.745	90.575
42	Ամրան Ø14 A500C	տ	0.082	407.333	33.401
43	Մետաղաթերթ	մ	1	24.126	24.126
	7. ՄԵՏԱՂԱԿԱՆ ԴԱՐՊԱՍ 1, ԴԱՐՊԱՍ 2,				
44	Մետաղական դարպասների պատրաստում և տեղադրում (առանց նյութի արժեքի)	տ	0.235	247.955	58.269
45	Պողպատյա ուղղանկյուն կտրվածի խողովակ 80x80x2.5մմ	գծ-մ	9.6	2.796	26.837
46	Պողպատյա ուղղանկյուն կտրվածի խողովակ 50x20x2մմ	գծ-մ	16.2	0.983	15.919
47	Պողպատյա ուղղանկյուն կտրվածի խողովակ 20x20x2մմ	գծ-մ	73.4	0.559	41.038
48	Ծխնի	հատ	12	2.948	35.376
49	Էլեկտրոդ	կգ	14.6	0.906	13.234
	ՆԱԽԿԻՆՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԷԼԵՄԵՆՏՆԵՐԻՑ ՑԱՆԿԱՊԱՏԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ				

50	Ցանկապատի օղակների տեղադրում առանց նյութի արժեքի (ապամոնտաժված ցանկապատ)	տ	0.85	68.346	58.094
51	Ներդիր էլեմենտներ՝ ապամոնտաժված մետաղ.ցանկապատի օղակների տեղադրման համար	տ	0.086	531.285	45.691
52	Ամրան Ø14 A500C-I	կգ	58.5	0.407	23.787
53	Մետաղաթերթ b=5մմ	մ	0.7	19.179	13.425
54	Մետաղական մակերևույթների հակակոռոզիոն ներկում (ներառյալ՝ ցանկապատ, դարպասներ, շքամուտքի հովհար)	մ	780.6	0.946	738.273
	ԸՆԴԱՄԵՆԸ				
	8. ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏ ՏԱՐԱԾՔՆԵՐ				
55	Տարածքի հարթեցում մեղանիզմով	100մ	5	1.254	6.269
55	Խաղահրապարակների նախապատրաստում Ù»Ë³ÝÇ½Ùáí ճիմապատման համար՝ բուսահողի փոռում 10ëÙ	մ	420	0.288	120.970
56	Նույն տարածքի ճիմապատում	մ	420	1.288	540.960
57	Գետի ավազից մանկական խաղահրապարակի կառուցում	մ	18	6.667	120.004
58	Տարածքի նախապատրաստում կանաչապատման համար՝ ձեռքով՝ h=20սմ	100մ	3	62.925	188.774
59	Բազմամյա խոտերի ցանում	100մ	3	15.892	47.676
60	Մշտադալար ծառերի և թփուտների տնկում	10հատ	20	37.443	748.862
	Արտաքին ինժեներական ցանցեր			0.000	0.000
1	Ե/բ դիտահորի ապամոնտաժում դիտահորի կափարիչի հետ միասին (հատ 1)	մ	1.5	24.109	36.164
2	Ջրաչափերի ապամոնտաժում	հատ	2	0.280	0.559
3	Ա/բ ծածկույթի քանդում -4	մ	10	0.051	0.508
4	IV կարգի գրունտի մշակում՝ կողլիցք	մ	18	3.278	59.011
5	III կարգի գրունտի մշակում՝ կողլիցք	մ	4	1.855	7.421
6	Պոլիէթիլենային խողովակ d=32մմ	գծ-մ	28	0.542	15.181
7	Ձևավոր մասերի տեղադրում	հատ	8	1.279	10.233
8	Միացման դետալներ	հատ	2	1.406	2.812
9	Ջրաչափի տեղադրում d=32մմ	հատ	1	25.727	25.727
10	Մեխանիկական զտիչի տեղադրում d=32մմ	հատ	1	6.091	6.091
11	Փականի տեղադրում d=32մմ	հատ	1	4.591	4.591
12	Գրունտի հետլիցք մեխանիզմով՝ տոփանումով	մ	14	0.068	0.949
13	Գրունտի հետլիցք ձեռքով	մ	3	0.949	2.846
14	Խճի նախապատ. շերտի կառուցում 40-70մմ ֆրակց. ա/բ շերտի տակ	մ	1.5	7.014	10.521
15	Ա/բ շերտի կառուցում -8մմ	մ	10	7.395	73.954
16	Միացում գործող գծին	տեղ	1	3.651	3.651
17	Խողովակածարի լվացում և հիդրավլիկ փորձարկում	գծ-մ	28	0.059	1.660
18	Ա/բ ծածկույթի քանդում	մ	12	0.051	0.610

19	IV կարգի գրունտի մշակում մեխանիզմով՝ կողլիցք	մ	37.8	0.652	24.657
20	III կարգի գրունտի մշակում կողլիցք՝ կողլիցք	մ	12	0.508	6.099
21	Պոլիմերա-ավազային հիմքով, ջրահեռացման հորերի տեղադրում, 900x900մմ	կ-տ	15	70.244	1053.659
22	Ավազե բարձիկի պատրաստում խողովակների տակ և վրա	մ	14.5	3.804	55.152
23	Պոլիվինիլքլորիդե d=150մմ խողովակի տեղադրում	գծ-մ	15	1.931	28.972
24	Պոլիվինիլքլորիդե d=200մմ խողովակի տեղադրում	գծ-մ	52.5	3.084	161.886
25	Պոլիվինիլքլորիդե d=300մմ խողովակի տեղադրում	գծ-մ	28	9.606	268.980
26	Պոլիվինիլքլորիդե ձևավոր մասերի տեղադրում	հատ	6	5.989	35.935
27	Ծալքավոր պոլիէթիլենային D=300մմ խողովակի տեղադրում	գծ-մ	20	9.606	192.129
28	Գրունտի հետլիցք մեխանիզմով՝ տոփանումով	մ	25	0.068	1.694
29	Խճի նախապատ. շերտի կառուցում 40-70մմ ֆրակց. ա/բ շերտի տակ	մ	1.8	7.014	12.626
30	Ա/բ շերտի կառուցում -8մմ	մ	15	7.395	110.932
31	Կոյուղու ե/բ դիտահորերի ապամոնտաժում կափարիչի հետ միասին (հատ 8)	մ	14	20.916	292.824
32	4-րդ կարգի գրունտի մշակում խրամուղում, մեխանիզմով՝ կողլիցք	մ	120.5	0.652	78.601
33	3-րդ կարգի գրունտի մշակում խրամուղում՝ կողլիցք	մ	11	0.508	5.591
34	Փափուկ գրունտով բարձիկի պատրաստում (խողովակի տակ և վրա)	մ	52.5	3.804	199.710
35	Հավաքովի ե/բ դիտահորերի պատրաստում և տեղադրում (հատ 8)	մ	12	69.642	835.709
36	Պոլիմերա-ավազային հիմքով, կոյուղու դիտահորի ծածկ տեղադրում, 900x900մմ	հատ	8	28.336	226.692
37	Պոլիմերա-ավազային հիմքով, կոյուղու դիտահորի կափարիչի տեղադրում, 620x65մմ	հատ	8	35.418	283.348
38	d=100մմ պոլիվինիլքլորիդե կոյուղու խողովակի տեղադրում	·Í/Ù	110	1.093	120.208
39	d=150մմ պոլիվինիլքլորիդե կոյուղու խողովակի տեղադրում	գծ-մ	65	1.931	125.544
40	d=200x4մմ պողպատյա խողովակից պատյանների տեղադրում	գծ-մ	4	3.084	12.334
41	Գրունտի հետլիցք մեխանիզմով	մ	52	0.068	3.524
42	Ջրահեռացման պոլիվինիլքլորիդե D=110x3,2մմ խողովակի տեղադրում /գրունտային ջրերի հեռացում/	գծ-մ	115	1.237	142.233
43	Ջրահեռացման պոլիվինիլքլորիդե D=160x3մմ խողովակի տեղադրում /գրունտային ջրերի հեռացում/	գծ-մ	70.5	1.915	134.973
44	Խողովակի շաղափում d=20մմ շաղափով, քայլը 150մմ շախմատաձև	100 տեղ	15	3.245	48.675

45	Ծալքավոր պոլիէթիլենային D=150մմ խողովակի տեղադրում	զծ-մ	20	4.032	80.647
46	Դրենաժային խողովակի վրա ծածկույթի իրականացում գլաքարով D>40մմ, H=30սմ	մ	12.2	5.040	61.493
47	Դրենաժային խողովակի վրա ծածկույթի իրականացում գլաքարով D<40մմ, H=30սմ	մ	12.2	5.040	61.493
48	Դրենաժային խողովակի վրա ծածկույթի իրականացում ավազակոպիճով , H=30սմ	մ	22.3	4.685	104.467
49	Գրունտի բարձում և տեղափոխում 7կմ հեռավորությունից (հետլիցքի համար)	տ	420	2.719	1142.099
50	Գրունտի հետլիցք մեխանիզմով	1000մ	0.258	57.537	14.845
51	Գրունտի հետլիցք ձեռքով	100մ	0.15	94.963	14.244
	Մետաղապլաստե դռներ			0.000	0.000
1	Մետաղապլաստե պրոֆիլից դռների տեղադրում՝ սպիտակ 6սմ,ապակեփաթեթով՝4+4մմ /հակահրդեհային աստիճանների ելքեր/	մ	3.36	33.326	111.976
	Ընդամենը				62045.455
	Շահույթ		10%		6204.545
	Ընդամենը				68250.000
	ԱԱՀ		20%		13650.000
	Ընդամենը				81900.000

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք.Ծաղկաձոր, Խ.Կեչառեցու 85 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ծաղկաձորի համայնքապետարան
ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9
ՀՀ ՖՆ ԳՎ
ՀՎՀՀ 03001885
հհ 900122002224
հհ 900122000392

Համայնքի ղեկավար **Ա.Հարությունյան**

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ
Հասցե՝ ք. Գավառ Անդրանիկի 5
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 08404037
հհ 1150014871111107

Տնօրեն **Հ.Մնացականյան**

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 07» հոկտեմբեր 2019թ. կնքված
<<ԾՔ-ԲՄԱՇՁԲ-19/1>> ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
«ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ»-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ «ԾՆՈՒՀ ՀՈԱԿ-Ի ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ» ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	**<<ԾԱՂԿԱՁՈՐԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՀՈԱԿ-Ի ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**	Պայմանագիր կնքելու պահից	70 օրացուցային օր
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագիր կնքելու պահից	70 օրացուցային օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ծաղկաձորի համայնքապետարան
ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9
ՀՀ ՖՆ ԳՎ
ՀՎՀՀ 03001885
հհ 900122002224
հհ 900122000392
Համայնքի ղեկավար Ա.Հարությունյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ
Հասցե՝ ք. Գավառ Անդրանիկի 5
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 08404037
հհ 1150014871111107
Տնօրեն Հ.Մնացականյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 07 » հոկտեմբեր 2019թ. կնքված
<<ԾՔ-ԲՄԱՇՁԲ-19/1>> ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45221142	**<<Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ի բակային տարածքի վերանորոգման աշխատանքներ**	0	0	0	0	0	0	0	0	0	40950000	61425000	81900000	81900000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ծաղկաձորի համայնքապետարան
ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9
ՀՀ ՖՆ ԳՎ
ՀՎՀՀ 03001885
հհ 900122002224
հհ 900122000392
Համայնքի ղեկավար Ա.Հարությունյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ
Հասցե՝ ք. Գավառ Անդրանիկի 5
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 08404037
հհ 1150014871111107
Տնօրեն Հ.Մնացականյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.S.	Կ.S.

Հավելված 4.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____ _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____ ___
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն